

ԲԱՐԵԳՈՐԾ

«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՍ»

BAREGORTS սեպտեմբեր-հոկտեմբեր 2021, № 3 (52), БАРЕГОРЦ

ՆՈՐ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԱՐՑԱԽ

Երևանի պետական համալսարանը ոչ մի դեպքում չի դադարելու վիրավոր, հազար ու մի գոհ ու կորուստ տեսած Արցախին օգնելուց և բոլոր ջանքերը ներդնելու է նրա ջարդված ողնաշարը շտկելու, ապաքինման, իրավիճակի կայունացման, գիտության զարգացման ու բարեկեցության բարձրացման ուղղությամբ: Դրա վկայություններից է ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Հովհաննես Հովհաննիսյանի գլխավորած պատվիրակության՝ սեպտեմբերի 17-18-ի ուղևորությունն Արցախ՝ որոշակի առաքելությամբ:

Տասնյոթ անդամներից բաղկացած պատվիրակության կազմում էին երկու պրոֆեսոր, արհևմիտեի և ուսխորհրդի նախագահները, երիտասարդության հետ տարվող աշխատանքների կառույցի ղեկավարը, ներկայացուցիչներ լրատվական կենտրոնից, նաև՝ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» գործադիր տնօրենն ու «Բարեգործ» պաշտոնաթերթի գլխավոր խմբագիրը: Ուղևորությունն ուներ նաև հիմնադրամի հոգաբարձության խորհրդի արտագնա նիստի հրավիրման և տեղում ըստ անհրաժեշտության որոշում կայացնելու լիազորություն:

Մինչև անցյալ տարվա կործանարար պատերազմը Արցախ կարող էինք մեկնել նաև Վարդենիս – Սոթք – Քարվանատ նորակառույց ճանապարհով՝ հիանալով բարձրաբերձ զագաթներով ու անտառածածկ լեռնալանջերով, Թարթառի գեղատեսիլ կիրճով ու Դաղիվանքով: Քարվանատը թշնամուն հանձնելու պատճառով այս անգամ ուղևորությունը, բնականաբար, կայացավ Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհով և ունեցավ հանգստի, անցակետային հարկադիր ստուգումների և նպատակային այլ կանգառներ: Բոլոր ուղևորներն էլ, անշուշտ, մտահոգ էին, հուսաբեկ ու ընկճված, բայց լի այս արհավիրքին ևս տոկալով՝ վճռակամությամբ:

Պատերազմից հետո ոմանք առաջին անգամ էին Լաչինի միջանցքով մեկնում Ստեփանակերտ: Արիավան (նախկին Աղավնո) գյուղում առաջին կանգառն էր: Այստեղ՝ Գարեգին Նժդեհի անվան դպրոցում հանդիպեցինք համայնքի ղեկավար Անդրանիկ Չավոյանին, որ «ժայռի նման կանգնած է ամուր» հայրենի հողին:



Արիավանում պրոֆ. Թեսա Հոֆմանի պուրակում

Աղավնո, Մեծ Շեն, Հին Շեն, Լիսագոր և Եղցահող գյուղերի դպրոցների ուսուցիչներին հանձնելով սեպտեմբեր ամսվա դրամական պարգևավճարը՝ 900,000 ՀՀ դրամ, որն ուղարկել էր հիմնադրամի վարչության՝ ԱՄՆ-ի բաժանմունքի անդամ Վահան Ալադադյանը: Ուսուցիչներին հանձնվեց նաև ելակի մուրաբաների խմբաքանակը, որը տրամադրել էր Արթիկից հիմնադրամի բարեկամ Կարո Վարդանյանը: Վերոնշյալ բոլոր դպրոցների աշակերտներին «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» կողմից հանձնվեց գրենական պիտույքների հերթական խմբաքանակը:

Բոլորս միասին ծառեր տնկեցինք մեր ժողովրդի գերմանացի բարեկամ, պրոֆ. Թեսա Հոֆմանի անվան պուրակում:



ԵՊՀ 100-ամյակի պուրակում ռեկտորը տնկում է իր առաջին ծառը

Ուրախալի է, որ Բերձորի շրջակայքում Գուրգեն Մելիքյանի ղեկավարությամբ, նրա և ուսանողների ձեռքով հիմնված պուրակներն ու այգիները՝ վաղուց արդեն բերքատու շուրջ 10 000 ծառերով և հուշաքարերով պահպանված են անխաթար:

Նորից ընթերցեցինք Մոնթեի հուշաքարի փորագրությունը՝ «Եթե կորցնենք Արցախը, կշրջենք հայոց պատմության վերջին էջը», կանգնեցինք Լեոնիդ Ազգալոյանի պուրակի հուշաքարի մոտ ու խորհեցինք նրա՝ «Մա Հայաստան է, և վերջ» ասության շուրջ, ԵՊՀ 100-ամյակին նվիրված պուրակում լուսանկարվեցինք խաչքար-հուշարձանի մոտ, որտեղ նոր ծառեր տնկեցին ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյանը, Գ. Մելիքյանն ու մյուս ուղեկիցները՝ հիշելով Լ. Չ. Մուրմեյանի՝ ժառատունկի նշանավոր աղոթքը՝ «Մեռելներուս իբրև խաչ ես այս ծառը տնկեցի»:

Ստեփանակերտում մեր պատվիրակությանն էր սպասում Արցախի համալսարանի ռեկտոր Արմեն Սարգսյանը. այդ պատճառով ստիպված մերժեցինք Եղսահողի համայնքապետի՝ Ժենգյալով հացի հրավերը՝ հաջորդ օրը վերադարձին նրանց անպայման այցելելու խոստումով:

Դառը կսկիծով անցանք մեզնից խլված, անանցանելի պատնեշներով, թուրք – ազերիական դրոշներով սահմանագատված, արդեն մեր առջև փակ Շուշիի կողքով ու վերջին անցակետով մտանք Ստեփանակերտ:



Ստեփանակերտում քննարկվեցին ԵՊՀ և ԱՊՀ կրթօջախների առաջիկա համագործակցության ծրագրերը

Երկարատև բովանդակալից էր ԵՊՀ և ԱՊՀ ռեկտորների հանդիպումը Արցախի պետական համալսարանի վերանորոգվող շենքում: Հանձնվող ուսումնագիտական գրականությանը տեղում գումարվեցին նաև պրոֆ. Ս. Մուրադյանի նոր լույս տեսած «Գրական հանգրվաններ, Դ» գրքի օրինակները: Ապա կայացավ երկու համալսարանների համագործակցության լայն ծրագրերի քննարկում, որի ընթացքում ԵՊՀ ռեկտորը խոստացավ գործնական օգնություն՝ Արցախի համալսարանի առջև ծագած խնդիրների լուծման ճանապարհին:

Արցախ նախորդ այցելությունների ժամանակ ուսանողական աշխույժ խումբը «Պարկ» հյուրանոցում գիշերները գրեթե չէր քնում. երգն ու պարը թնդացնում էին ողջ շենքը, և դժգոհող չկար: Այս անգամ գրեթե լուռ գիշերեցինք ընթրիքից հետո:

Ուղևորության հիմնականատակներից էր նաև հաջորդ օրվա այցելությունը Ասկերանի շրջանի Դահրավ գյուղ, որը մայրաքաղաք Ստեփանակերտից հեռու է 19 կմ: Թավազագանգուր անտառների մեջ թաղված գեղատեսիլ այս հայաբնակ գյուղը հին պատմություն ունի: 1872 թ.:

Այստեղ եկած Բաֆֆին ջուր է խմել գյուղի կենտրոնում բխող աղբյուրից, որի վրա, ի հիշատակ հայ մեծ գրողի այցելության, կառուցվել է «Բաֆֆու աղբյուր հուշաքարը»: Դահրավի հնամենի պատմությունն այժմ ընթանում է նոր իրողությամբ. նրա ցածրադիր տարածքում է իրականացվում «Հարյուր տուն Արցախում» բարեգործական ծրագիրը, որի մասնակիցներից մեկն էլ Երևանի պետական համալսարանն է: Պատվիրակությունը Դահրավ այցելեց այն պահին, երբ Հայաստանի հեռուստապետկոմի և ռադիոկոմիտեի միջոցներով արդեն կառուցվող երկու տների կողքին հիմնարկվում էր երրորդը՝ Երևանի պետական համալսարանի հովանավորությամբ կառուցվողը:

Հիմնարկեքին եկած համալսարանական պատվիրակությանը հանդիսավորությամբ դիմավորեցին շինարարները՝ նախաձեռնողներից մեկի՝ հանրահայտ հեռուստատեսային և րեմական դերասան Սոս Զանիբեկյանի առաջնորդությամբ: Վերջինս ոգևորությամբ ներկայացրեց ապագայում Դահրավի հետ միավորվելիք նորակառույց ավանի սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարները, խոսեց բնակիչների զբաղմունքների, ճանապարհաշինության, ջրամատակարարման, կապի, դպրոցի, մշակույթային կենտրոնի և այլնի մասին:

– Գլխավոր դասատուներն են Էկե, – գյումրու խոսվածքով սրամտեց նկարահանողներից մեկը:

ԵՊՀ ռեկտորի պաշտոնակատար Հովհ. Հովհաննիսյանը ներկաների ծափահարությունների ներքո եռասնյակ տան բետոնն հիմքի վրա դրվող փայտե պատին խիեց ամրացնող խորհրդանշական մեխը: Ապագա տան կառույցը պատկերացնելու համար դիտեցինք արդեն ձևավորվող, նախագծային տեսքի եկող տները: Ռեկտորը խոստացավ ամեն ինչով օգնել շինարարությանը, իսկ ավարտից հետո ներկա լինել բացման արարողությանը, մշտական կապ հաստատել համալսարանի կառուցած տանը բնակվող ընտանիքի հետ և աջակցել նրան երեխա-



Դահրավի մշակույթի տան վերակառուցման հնարավորությունների քննարկում

ների բուհական կրթության հարցերում:

Իր հերթին Գ. Մելիքյանն էլ խոստացավ կով տրամադրել նորարարական այդ ընտանիքին: Մոս Ջանիբեկյանի առաջարկով պատվիրակությունը գյուղի փոշոտ ու քարքարոտ ճանապարհներով, արևից խանձված, աշխույժ երեխաների ուղեկցությամբ այցելեց նաև Դահրավի մշակույթի տուն. երբեմնի հրապուրիչ կենտրոնը, որ բազմաթիվ համերգներ ու թատերական ներկայացումներ էր պարզևեղ դահրավցիներին, այժմ անշքացել, գրեթե ավերակի է վերածվել: Անձրևաջրերից փտած, ճոճացող ու փոս ընկած տախտակե հատակով, քայքայված առաստաղով ու անհրապույր պատերով այն այլևս չի կարող ծառայել իր նպատակին և ունի հրատապ նորոգման կարիք: Ի դեպ, այստեղ հանդիպեցինք նաև Շուշիում ճարտարագիտական համալսարանի ուսումնական մասնաշենքը թողած, Դահրավում նոր լսարան փնտրող ռեկտոր Հովհաննես Թորմաջյանին և պրոռեկտորից մեկին:

Գուրգեն Մելիքյանը խոստացավ հիմնադրամի միջոցներով նորոգել առաստաղը և խնդրեց մասնագիտական նախահաշիվ:

Այստեղ էլ անկեղծ ու համար էր սուրճի հրավերը, բայց մերժվեց՝ եղցահողիներին տված խոստումը հարգելու պատճառաբանությամբ:

Ճանապարհին մեզ դիմավորեց Եղցահող գյուղի համայնքապետ Արտակ Հակոբյանը և ոլորապետույթ գառիվերով առաջնորդեց գրեթե անմատչելի բնակավայրը:

Ուղղակի վայելելով արցախյան գեղեցիկ բնապատկերները՝ բարձրացանք մայրաքաղաքից 45 կմ հեռու՝ Արցախի Հանրապետության հարավարևմտյան մասում գտնվող Եղցահող գյուղը և հյուրընկալվեցինք համայնքապետի տանը: Հայկական ավանդական տուն, որի պատշգամբից երևում էր լեռնալանջի բարձունքներից մեկին վեհորեն բազմած Սբ. Աստվածածին եկեղեցին, և քիչ հեռու՝ ուրիշ մի բարձունքի, շնթած էին մոտ 70–80

ապյար՝ գյուղի անցուղարձը վերահսկող: Նրանք կարծես գոյություն չունեին Եղցահողի խաղաղասեր բնակիչների համար, որոնք, սակայն, պատրաստ են հակահարված տալու նենգաղավ թշնամու ցանկացած ոտնձգությանը: Բայց զագագած, զոմնացող շան վտանգն առկա էր և զգալի՝ հյուրերիս համար, ինչպես Սյունիքի ու Գեղարքունիքի տարածքներ թաքուն ներխուժած ադրբեջանցի «խաղաղ» զինվորականները, որոնք այս տարվա մայիսից հայտնվել են ինքնիշխան Հայաստանի սահմաններում և խաթարում են հայ բնակչության բնականոն կյանքը՝ ազատ անցուղարձը, գյուղատնտեսական ու անասնապահական աշխատանքները, սակայն որոնց, ցավոք, Հայաստանի սահմաններից ուժով վռնդելը հղի է նոր պատերազմի վտանգով:

Հյուրասեր տանտերը, սակայն, ինչպես սպասելի էր, «համեստորեն» դրժել էր իր խոստումը՝ վառարանի վրա թիվող տաք-տաք ժինգյալով հացից բացի սեղանը ծանրաբեռնելով գյուղաշխարհի այլևայլ բարիքներով: Հայրենի հողին ամուր կառչած նահապետական հյուրասեր տանը ծավալված անկեղծ ու սրտաբաց զրույցը մի պահ փոխեց բոլորիս տրամադրությունը. հուսաշատ դարձրեց. ուրեմն՝ դեռ ամեն ինչ կորած չէ, դեռ կա հայաշունչ Արցախը, կա վերածնվելու հույս...

Մեր պատվիրակությունը, անմոռուչ հաղթահարելով ճանապարհային անցակետերում անձը հաստատող փաստաթղթային տհաճ ստուգումները, վերադարձավ Երևան:



Պատվիրակությունը Եղցահողի դարպասների մոտ

ԼՈՒՐԵՐ ԱՐՑԱԽԻՑ

Ստեփանակերտում քառորդ դար գործում է ամերիկահայ նշանավոր բժիշկներ ու բարեգործներ Ջորջ և Քերոլան Նաջարյանների միջոցներով հիմնված, այժմ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» աջակցությամբ կառավարվող «Արփեն. Մայր և նորածին» կենտրոնը: Նրա արդյունավետ գործունեությունը բնորոշվում է պերճախոս թվերով. հիմնադրումից ի վեր նրա խնամքն են վայելել ավելի քան 34 հազար հայ երեխա՝ իրենց մայրերի հետ:

Արցախյան վերջին պատերազմից հետո կենտրոնի խնամքով ու հսկողությամբ արդեն ծնվել է յոթանասուն երեխա, և այդ թիվն աճման միտում ունի:

Փանք «Արփեն» կենտրոնի աշխատակիցներին, նրանց հոգածությամբ խնամված հայ երեխաներին, որոնցից շատերն արդեն այսօր մեծացել ու հայրենիքի

գինվոր են և Արցախի ու Հայաստանի ապագա տերերն ու պաշտպանները:

* * *

Կանգուն ու աներեր է Արցախի Աղավնո կամ Արիավան գյուղը, որի բնակիչները՝ հողագործ-ներ, դայրոցի ուսուցիչներ և աշակերտներ, ապրում ու ապրեցնում են գյուղը և հերոսանում են համայնքապետ Անդրանիկ Չավուշյանի ղեկավարությամբ, պահպանում են հայրենի հողն ու տունը: Նրանք արժանի են խոր համակրանքի և համակողմանի աջակցության: Ահա ինչու է «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը» գյուղի ուսուցիչներին տրամադրում դրամական օգնություն, իսկ հայրենապահ բազմազավակ ընտանիքներին նվիրում արդիական սառնարաններ ու լվացքի մեքենաներ:

ՇՈՒՇԻԻ ԵՎ ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐՆԵՐ

1. Շուշիի շրջանի «Մեծ Շենի Սասուն Դավթյանի անվան միջնակարգ դպրոց»
ՊՈԱԿ – 130 000
 2. Շուշիի շրջանի «Հին Շենի Ա. Մկրտչյանի անվան հիմնական դպրոց»
ՊՈԱԿ – 140 000
 3. Շուշիի շրջանի «Լիսագորի միջնակարգ դպրոց»
ՊՈԱԿ — 130 000
 4. Շուշիի շրջանի «Եղջահողի Մ. Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոց»
ՊՈԱԿ – 230 000
 5. Քաշաթաղի շրջանի «Աղավնոյի Գ. Նժդեհի անվան միջնակարգ դպրոց»
ՊՈԱԿ – 270 000
- Ընդամենը՝ 9000 000 ՀՀ դրամ

2021Թ. ՎՃԱՐՎԱԾ ՈՒՍՍԱՆ ՎԱՐՁԵՐ

Յ/հ	Ամսաթիվ	ԲՈՒՅ	Կրթաթոշակը և ուսանողը	Գումար
1	18.01.21	ԵՊՅ հիմնադրամ	Դր. Նազելի Չարչյանի անվան կրթաթոշակ, Իսրայելյան Ռուբեն, ֆարմացիա 4-րդ կուրս	30000
2	18.01.21	ԵՊՅ հիմնադրամ	Գրող Ստեփան Ալաջաջյանի անվան կրթաթոշակ, Բարսեղյան Վարդուհի, հայ բանասիր. ֆակ. 4-րդ կուրս	30000
3	15.02.21	ԵՊՅ հիմնադրամ	Կիրակոսյան Յուրիկ, իրավագիտ. 4-րդ կուրս	100000
4	15.02.21	ԵՊՅ հիմնադրամ	Մխիթարյան Խաչատուր, թյուրքագիտ. պատմ. մագիստր. 1-ին կուրս	50000
5	15.02.21	ԵՊՅ հիմնադրամ	Վարդանյան Արսեն, թյուրքագիտ. 3-րդ կուրս	50000
6	15.02.21	ԵՊՅ հիմնադրամ	Սայադյան Սերոբ, միջազգ. հարաբ. 5-րդ կուրս հեռակա	100000

7	15.02.21	ԵՊՀ հիմնադրամ	Բաղայան Դավիթ, իրան. պատմ. մագիստր. 2-րդ կուրս	100000
8	15.02.21	ԵՊՀ հիմնադրամ	Եղիազարյան Սամվել, տնտես. և կառավարում մագիստր. 1-ին կուրս հեռակա	150000
9	15.02.21	ԵՊՀ հիմնադրամ	Մաջիդ Վալիօլլահ Քարիմի, իրանագիտ. ասպիրանտ	250000
10	15.02.21	ԵՊՀ հիմնադրամ	Հակոբյան Հասմիկ, հայ բանասիր. 2-րդ կուրս	100000
11	15.02.21	ԵՊՀ հիմնադրամ	Մուրադյան Անուշ, թյուրքագիտ. 2-րդ կուրս	100000
12	15.02.21	ԵՊՀ հիմնադրամ	Գրիգորյան Մարիամ, ժուռնալիստիկա, մագիստր. 2-րդ կուրս հեռակա	100000
13	15.02.21	ԵՊՀ հիմնադրամ	Սողոմոնյան Անահիտ, ԵԼՀ 1-ին կուրս	100000
14	15.02.21	ԵՊՀ հիմնադրամ	Դր. Նազելի Չարչյանի անվ. կրթաթոշակ, Իսրայելյան Ռուբեն Ֆարմացիա 4-րդ կուրս	30000
15	15.02.21	ԵՊՀ հիմնադրամ	Գրող Ստեփան Ալաջաջյանի անվան կրթաթոշակ, Բարսեղյան Վարդուհի, հայ բանասիր. ֆակ. 4-րդ կուրս	30000
16	15.02.21	ԵՊՀ հիմնադրամ	Դր. Նազելի Չարչյանի անվ. Կրթաթոշակ, Եգանյան Տիգրան, քիմիա մագիստր. 1-ին կուրս	30000
17	16.02.21	Մեսրոպ Մաշտոց համալսարան	Բաղայան Ռոբերտ, իրավագիտ. մագիստր. 2-րդ կուրս հեռակա (բացառություն)	100000
18	16.02.21	ԵՊՀ հիմնադրամ	Սողոմոնյան Մարիամ, բուժֆակ. 2-րդ կուրս	100000
19	16.02.21	ՃՇՀԱՀ հիմնադրամ	Ոսկանյան Լուսինե, դիզայն 1-ին կուրս	200000
20	16.02.21	ԵՊՀ հիմնադրամ	Ղազարյան Մոնիկա, ատամնաբուժ. 3-րդ կուրս	150000
21	26.02.21	ԵՊՀ հիմնադրամ	Բարսեղյան Վահագն, արաբագիտ. 4-րդ կուրս, մարտական հերթապահություն ապրիլ.	120000
22	26.02.21	ԵՊՀ հիմնադրամ	Բիջոյան Գեղամ, արաբագիտ. 4-րդ կուրս, մարտական հերթապահություն ապրիլ.	120000
23	26.02.21	ԵՊՀ հիմնադրամ	Սարգսյան Նարեկ, արաբագիտ. 4-րդ կուրս, մարտական հերթապահություն	120000
24	26.02.21	ԵՊՀ հիմնադրամ	Միերյան Դավիթ, արաբագիտ. 4-րդ կուրս, ապրիլյան պատերազմի մասնակից	120000
25	26.02.21	ԵՊՀ հիմնադրամ	Ղազարյան Կառլեն, արաբագիտ. 4-րդ կուրս	80000
26	26.02.21	ԵՊՀ հիմնադրամ	Սարգսյան Էրիկ, արաբագիտ. 4-րդ կուրս	80000
27	26.02.21	ԵՊՀ հիմնադրամ	Ղարազյոզյան Լիլիթ, թյուրքագիտ. 1-ին կուրս	100000
28	26.02.21	ԵՊՀ հիմնադրամ	Ղարազյոզյան Լուսինե, մարդ. ռեսուրս.կառավարում մագիստր. 1-ին կուրս	100000
29	26.02.21	ԵՊՀ հիմնադրամ	Թորոսյան Դիանա, սոց. աշխատանք, 4-րդ կուրս	100000
30	26.02.21	Հայաստանի Ամերիկյան համալսարան	Սարգսյան Իոաննիս-Սարանդոս, անգլերեն հաղորդ. 3-րդ կուրս	150000
31	26.02.21	ԵՊՀ հիմնադրամ	Մանասյան Լիանա, թարգմ. և միջմշակ. հաղորդ. 2-րդ կուրս /Ջավախք/	100000

32	26.02.21	ԵՊԲՀ հիմնադրամ	Գաբրիելյան Չարուհի, կլին. օրդինատ. 1-ին կուրս, ընդհ. ստոմ. /Ջավախք/	100000
33	26.02.21	ԵՊԲՀ հիմնադրամ	Մկոյան Օյա, ընդհ. բժշկություն 3-րդ կուրս /Ջավախք/	100000
34	15.03.21	Գրիգոր Նարեկացի Համալսարան	Ենգիբարյան Տաթևիկ, ՏՄԿԿ 3 -րդ կուրս, Զաշաթաղ, բացառություն	100000
35	23.03.21	ԵՊՀ հիմնադրամ	Դր. Նազելի Չարչյանի անվ. կրթաթոշակ, Իսրայելյան Ռուբեն ֆարմացիա 4-րդ կուրս	30000
36	23.03.21	ԵՊՀ հիմնադրամ	Գրող Ստեփան Ալաջաջյանի անվան կրթաթոշակ, Բարսեղյան Վարդուհի, հայ բանասիր. ֆակ. 4-րդ կուրս	30000
37	02.04.21	ԵՊԼՀ հիմնադրամ	Մելքոնյան Մերի Ազատի, ԹՄՀ թարգմանչական գործ 2-րդ կուրս	50000
38	06.04.21	Ռ. Մելիքյանի անվ. պետ. երաժշտական քոլեջ	Լուսինե Չաքարյանի և Խորեն Պալյանի անվ. կրթաթոշակ, Խոջոյան Օվսաննա, վոկալ 4-րդ կուրս	10000
39	06.04.21	Ռ. Մելիքյանի անվ. պետ. երաժշտական քոլեջ	Լուսինե Չաքարյանի և Խորեն Պալյանի անվ. կրթաթոշակ, Տերտերյան Մարիամ, վոկալ 4-րդ կուրս	10000
40	06.04.21	Կոմիտասի անվ. պետ. կոնսերվատորիա	Լուսինե Չաքարյանի անվ. կրթաթոշակ, Դավթյան Լիլիթ, դաշնամուր և վոկալ մագիստր. 1-ին կուրս	10000
41	06.04.21	ԵՊՀ հիմնադրամ	Դր. Նազելի Չարչյանի անվ. կրթաթոշակ, Իսրայելյան Ռուբեն ֆարմացիա 4-րդ կուրս	30000
42	06.04.21	ԵՊՀ հիմնադրամ	Գրող Ստեփան Ալաջաջյանի անվ. կրթաթոշակ, Բարսեղյան Վարդուհի, հայ բանասիր. ֆակ. 4-րդ կուրս	30000
43	06.04.21	ԵՊՀ հիմնադրամ	Դր. Նազելի Չարչյանի անվ. կրթաթոշակ, Եգանյան Տիգրան, քիմիա մագիստր. 1-ին կուրս	30000
44	09.04.21	ԵՊԲՀ հիմնադրամ	Սիմոնյան Սարկիս, ստոմատոլոգիա 1-ին կուրս	100000
45	12.04.21	ԵՊՀ հիմնադրամ	Մանվելյան Գրիգոր, թյուրքագիտ. 4-րդ կուրս /պատերազմի մասնակից/	150000
46	03.05.21	Ռ. Մելիքյանի անվ. պետ. երաժշտական քոլեջ	Լուսինե Չաքարյանի և Խորեն Պալյանի անվ. կրթաթոշակ, Խոջոյան Օվսաննա, վոկալ 4-րդ կուրս	10000
47	03.05.21	Ռ. Մելիքյանի անվ. պետ. երաժշտական քոլեջ	Լուսինե Չաքարյանի և Խորեն Պալյանի անվ. կրթաթոշակ, Տերտերյան Մարիամ, վոկալ 4-րդ կուրս	10000
48	03.05.21	Կոմիտասի անվ. պետ. կոնսերվատորիա	Լուսինե Չաքարյանի անվ. կրթաթոշակ, Դավթյան Լիլիթ, դաշնամուր և վոկալ մագիստր. 1-ին կուրս	10000
49	03.05.21	ԵՊՀ հիմնադրամ	Դր. Նազելի Չարչյանի անվ. կրթաթոշակ, Իսրայելյան Ռուբեն ֆարմացիա 4-րդ կուրս	30000
50	03.05.21	ԵՊՀ հիմնադրամ	Գրող Ստեփան Ալաջաջյանի անվան կրթաթոշակ, Բարսեղյան Վարդուհի, հայ բանասիր. ֆակ. 4-րդ կուրս	30000
51	03.05.21	ԵՊՀ հիմնադրամ	Դր. Նազելի Չարչյանի անվ. կրթաթոշակ, Եգանյան Տիգրան, քիմիա մագիստր. 1-ին կուրս	30000
52	14.05.21	ԵՊՀ հիմնադրամ	Բաղդյան Դավիթ, սոցիոլոգիա 2-րդ կուրս	100000
53	14.05.21	ԵՊՀ հիմնադրամ	Բաղդյան Դիանա, հոգեբան. 1-ին կուրս	100000

54	09.06.21	Ռ. Մելիքյանի անվ. պետ. երաժշտական քոլեջ	Լուսինե Չաքարյանի և Խորեն Պալյանի անվ. կրթաթոշակ, Խոջոյան Օվսաննա, վոկալ 4-րդ կուրս	10000
55	09.06.21	Ռ. Մելիքյանի անվ. պետ. երաժշտական քոլեջ	Լուսինե Չաքարյանի և Խորեն Պալյանի անվ., Տերտերյան Մարիամ, վոկալ 4-րդ կուրս	10000
56	09.06.21	Կոմիտասի անվ. պետ. կոնսերվատորիա	Լուսինե Չաքարյանի անվ. կրթաթոշակ, Դավթյան Լիլիթ, դաշնամուր և վոկալ մագիստր. 1-ին կուրս	10000
57	09.06.21	ԵՊՀ հիմնադրամ	Դր. Նազելի Չարչյանի անվ. կրթաթոշակ, Իսրայելյան Ռուբեն ֆարմացիա 4-րդ կուրս	30000
58	09.06.21	ԵՊՀ հիմնադրամ	Գրող Ստեփան Ալաջաջյանի անվ. կրթաթոշակ, Բարսեղյան Վարդուհի, հայ բանաս. ֆակ. 4-րդ կուրս	30000
59	09.06.21	ԵՊՀ հիմնադրամ	Դր. Նազելի Չարչյանի անվ. կրթաթոշակ, Եզանյան Տիգրան, քիմիա մագիստր. 1-ին կուրս	30000
60	26.07.21	ԵՊՀ հիմնադրամ	Դր. Նազելի Չարչյանի անվ. Կրթաթոշակ, Եզանյան Տիգրան, քիմիա մագիստր. 1-ին կուրս	30000
61	10.08.21	ԵՊՀ հիմնադրամ	Դր. Նազելի Չարչյանի անվ. Կրթաթոշակ, Եզանյան Տիգրան, քիմիա մագիստր. 1-ին կուրս	30000
62	29.09.21	ԵՊՀ հիմնադրամ	Դր. Նազելի Չարչյանի անվ. Կրթաթոշակ, Եզանյան Տիգրան, քիմիա մագիստր. 2-րդ կուրս	30000
63	29.09.21	ԵՊՀ հիմնադրամ	Դր. Նազելի Չարչյանի անվ. կրթաթոշակ, Իսրայելյան Ռուբեն ֆարմացիա մագիստր. 1-ին կուրս	30000
64	29.09.21	ԵՊՀ հիմնադրամ	Գրող Ստեփան Ալաջաջյան կրթաթոշակ, Միրաքյան Էլեն, հայ բանասիր. ֆակ. 3-րդ կուրս	30000
65	05.10.21	ԵՊՀ հիմնադրամ	Մխիթարյան Խաչատուր, թյուրքագիտ. պատմ. մագիստր. 2-րդ կուրս	80000
66	05.10.21	ԵՊՀ հիմնադրամ	Բիչոյան Տիգրան, թյուրքագիտ. 4-րդ կուրս	120000
67	05.10.21	ԵՊՀ հիմնադրամ	Ավետիսյան Տարոն, աշխարհ. և երկր.,	200000
68	05.10.21	ԵՊՀ հիմնադրամ	Չանդոյան Տիգրան, քրոագիտ և թալիշագիտ.	100000
69	05.10.21	ԵՊՀ հիմնադրամ	Եղիազարյան Ամալյա, հոգեբան. 2-րդ կուրս	100000
70	05.10.21	ԵՊՀ հիմնադրամ	Բաղդյան Դավիթ, սոցիոլոգիա 2-րդ կուրս	100000
71	05.10.21	ԵՊՀ հիմնադրամ	Բաղդյան Դիանա, հոգեբան. 1-ին կուրս	100000
72	05.10.21	ԵՊՀ հիմնադրամ	Եղիազարյան Սամվել, հայ բանասիր. մագիստր. 2-րդ կուրս	150000
73	05.10.21	ԵՊՀ հիմնադրամ	Տոնոյան Օվսաննա, աշխարհ. և երկր. 3-րդ կուրս	100000
74	05.10.21	ԵՊՀ հիմնադրամ	Էլիազյան Գայանե, սոց. աշխատանք, 3-րդ կուրս	50000
75	05.10.21	ԵՊՀ հիմնադրամ	Ներսեսյան Չարուհի, արաբագիտ. 2-րդ կուրս	100000
76	05.10.21	ԵՊՀ հիմնադրամ	Առաքելյան Նվարդ, թյուրքագիտ, 2-րդ կուրս	150000
77	05.10.21	ԵՊՀ հիմնադրամ	Ղարաբյոզյան Լիլիթ, թյուրքագիտ. 2-րդ կուրս	100000
78	05.10.21	ԵՊՀ հիմնադրամ	Հակոբյան Հասմիկ, հայ բանասիր. 3-րդ կուրս	120000

79	05.10.21	ԵՊՀ հիմնադրամ	Չախոյան Ադրիևա, ԵԼՀ, իսպան-անգլ. 3-րդ կուրս	70000
80	05.10.21	ԵՊՀ հիմնադրամ	Չախոյան Ադրիևա, ԵԼՀ, իսպան-անգլ. 3-րդ կուրս	70000
81	05.10.21	ԵՊՀ հիմնադրամ	Հակոբյան Սվետլանա, ԵԼՀ, լեզվաբան. 3-րդ կուրս	150000
82	05.10.21	ԵՊՀ հիմնադրամ	Հայրապետյանց Ալեն, իրան. պատմաբանասիր.2-րդ կուրս	120000
83	05.10.21	ՀԱԱՀ Վանաձորի մ/ճ	Լալազարյան Էրիկ, գյուղ. մեքենայացում 3-րդ կուրս	50000
84	05.10.21	ԵՊԲՀ հիմնադրամ	Առուստամյան Գուրգեն, բնակ. Վարձ /Արցախի քաղաքացի/	30000
85	05.10.21	ԵՊԲՀ հիմնադրամ	Ջհանգիրյան Համլետ, բնակ. Վարձ /Արցախի քաղաքացի/	25000
86	05.10.21	ԵՊԲՀ հիմնադրամ	Ղազարյան Մոնիկա, ատամնաբուժ. 4-րդ կուրս	150000
87	05.10.21	ԵՊԲՀ հիմնադրամ	Սողոմոնյան Մարիամ, ընդհ. բժշկություն 3-րդ կուրս	100000
88	05.10.21	ԵՊԲՀ հիմնադրամ	Ղարազյոզյան Տաթևիկ, ընդհ. բժշկություն 2-րդ կուրս	100000
89	05.10.21	ԵՊԲՀ հիմնադրամ	Մկոյան Օլյա, ընդհ. բժշկություն 4-րդ կուրս /Ջավախք/	100000
90	05.10.21	ՀՊՏՀ հիմնադրամ	Կոստանյան Մարինա, ֆինանս ըստ ոլորտի 3-րդ կուրս	50000
91	05.10.21	Հայկական բժշկական ինստիտուտ	Սողոմոնյան Սերգեյ, ատամնաբուժ. 3-րդ կուրս	100000
92	05.10.21	ՃՇՀԱՀ հիմնադրամ	Ոսկանյան Լուսինե, դիզայն 2-րդ կուրս	250000
93	05.10.21	ՃՇՀԱՀ հիմնադրամ	Գասպարյան Գոհար, հագուստի մոդել. և դիզայն 1-ին կուրս	80000
94	05.10.21	ՀԱՊՀ հիմնադրամ	Հովհաննիսյան Դավիթ, տեղեկատվ. տեխնոլոգ. 3-րդ կուրս /Ջավախք/	100000
95	05.10.21	Վ.Բրյուսովի անվ. պետ. լեզվ. համալսարան	Մանվելյան Լիանա, լեզվաբան. 3-րդ կուրս /Ջավախք/	100000
96	05.10.21	ՄՊՀ Երևանի մ/ճ	Թորգոմյան Ժիրայր, միջազգ. հարաբ. մագիստր. 1-ին կուրս	200000
97	05.10.21	Արցախի պետական համալսարան	Մուսայեյան Սվետլանա, իրավագիտ. 2-րդ կուրս	120000
98	24.10.21	Գրիգոր Նարեկացի համալսարան	Ռասոյան Մարիանա, Մեթոդիկա բաժին, 2-րդ կուրս (բացառություն)	120000
99	24.10.21	Երևանի պետական համալսարան	Հակոբյան Մարիամ, թյուրքագիտ., 2-րդ կուրս	120000
100	28.10.21	Երևանի պետական համալսարան	Հարությունյան Աննա, աշխարհագր. և երկրաբան.ֆակ., սերվիս բաժնի 3-րդ կուրս	100000
101		Կառավարման ակադեմիա	Մաթևոսյան Հռիփսիմե, մագիստր. 2-րդ կուրս	100000

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 8,435,000 ՀՀ դրամ

ԴԻՄՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

Վաղարշակ Փիլոսոփայանը մեր հիմնադրամի լավագույն բարեկամներից է, որը, իր իսկ խոստովանությամբ, «կամավոր գինվորագրվել է հայրենիքի հոգսերին» և եռանդով մասնակցում է բարեգործական մի շարք ծրագրերի: Նրա նվիրատվությամբ է վերջերս իրականացվել Վահան Տերյանի տուն-թանգարանի ցուցասրահի վերանորոգումը հայ մեծ բանաստեղծի ու հանրային գործչի ծննդավայրում՝ Ջավախքի Գանձա գյուղում:

Միտով ձեզ ենք ներկայացնում անձնավորված հայրենիքի և բարեգործության մասին նրա հետևյալ գրառումը

«Քուն թե արթուն միշտ այն տպավորության ու սպասման մեջ եմ, որ երբ հետո կիսվում եմ մտքով կամ փողով, կարծես մտքերս ավելի հստականում ու նպատակներս ավելի են պայծառանում:

Համոզվել եմ՝ հենց դրանից էլ ավելի շատանում է ուղարկվելիք փողը: Ահա ինչու եմ ավելի հանդուգն համարձակությամբ խնդրում իմ ընկերներին ու մտերիմներին, որ հայրենիքի համար միշտ էլ մի բան ավել անեն:

Երջանկահիշատակ Արշալույս քեռիս ամեն պատեհ առիթով ասում եր.

❖ ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՎԱՐՉԱԿԱԶՄ
06. 07. 2019, № Բ -41/34

Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի գործադիր տնօրեն պրն Գ. Մելիքյանին

Հարգելի պարոն Մելիքյան,

Շահումյանի շրջանի բնակչության և անձամբ իմ անունից մեր երախտիքի խոսքն ենք ուզում հղել Ձեզ շրջանին ցուցաբերած մարդասիրական օգնության և աջակցության համար: Հուսով ենք, որ մեր փոխհամագործակցությունը կկրի շարունակական բնույթ, որը կնպաստի բնակչության սոցիալապես անապահով խավի խնդիրների հնարավորինս լուծմանը և սոցիալական բեռի թեթևացմանը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՇՐՋԱՎԱՐՉԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ՝
(ստորագրություն) Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

❖ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» հոգաբարձության խորհրդի նախագահ պրն Ա. ԱՎԱԳՅԱՆԻՆ
գրող, երգահան Արսեն Համբարյանից
ԴԻՄՈՒՄ

Կարևորելով տարիներ առաջ գրածս «Տոգեղը Երևանի բանտում» երգի ասելիքի արդիականությունը՝ խնդրում եմ հատկացնել 200 000 դրամ՝

– Բալի՛կ ջան, տվածը գտած է, պահածը՝ կորած: Շնորհակալ եմ հեռուներում ապրողների հոգին հայրենիքի հոգսերով սրբել-մաքրելու քո գուրգենյան (քավորիս անունն է) ջանքերի համար:

Քեռու այս պատվիրանը, որ կատարվում է սրբորեն, գոնե ինձ համար վաղուց դարձել է կենսակերպ և ապրելու իմաստ:

Հարգանքով՝ հայության հոգսերին կամավոր զինվորագրված՝

ՎԱՂԱՐՇԱԿ ՓԻՒՍՏՅԱՆ»:

Երգի գործիքավորման և ավելի պատշաճ ու ազդու ներկայացնելու, տարածելու համար:

Շնորհակալությամբ և հարգանքներով՝
(ստորագրություն) Ա. ՀԱՄԲԱՐՅԱՆ
24. 03. 2021

❖ «ՋԱՎԱԽՔԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ»՝ ՋԱՀ

Վրաստան, ք. Ախալքալաք, Թամարա թագուհու 46,
հեռ.՝ 995 595 30 24 98

08.09.2021

N 0809 – 1

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» գործադիր մարմնի ղեկավար Գուրգեն Մելիքյանին

Հարգելի պարոն Մելիքյան,

Ինչպես գիտեք, օգոստոսի 1-ին Ջավախքի Գանձա գյուղում տեղի ունեցավ նշանավոր հայ բանաստեղծ, քնարերգու և հասարակական-քաղաքական գործիչ Վահան Տերյանի տուն-թանգարանի ցուցասրահի բացումը:

«Ջավախքին աջակցություն հիմնադրամի» հոգաբարձուների խորհուրդը և գործադիր վարչությունը շնորհակալություն են հայտնում հիմնադրամի այս ծրագրին Ձեր գործնական մասնակցության և ֆինանսական աջակցության համար: Ձեր կողմից նվիրաբերված 2,400,000 դրամը ամբողջությամբ ուղղվել է Գանձայում Վահան Տերյանի

տուն-թանգարանի ցուցասրահի վերանորոգմանը: Ձեր պատրաստակամությամբ կարողացանք լուծել Ջավախքում առկա մի շարք մշակութային խնդիրներից ևս մեկը, ինչպես նաև վառ պահել հայ ինքնության կարևորագույն բաղադրիչներից մեկը՝ մշակութային դիմագիծը:

Լավագույն մաղթանքներով, Գործադիր տնօրեն՝
Ս. Սկոյան

(ստորագրություն, կնիք)

❖ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ա Գ Ի Ր

Տրվում է հայ լեզվաբան, արևելագետ, պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանին՝ ԵՊՀ մշակույթի կենտրոնի հետ երկար տարիների արդյունավետ համագործակցության համար և ԵՊՀ մշակույթի կենտրոնի հիմնադրման 15-ամյակի կապակցությամբ:

ԵՊՀ ռեկտորի ժ/պ՝ Գ. Գեվորգյան
(կնիք, ստորագրություն) 2021թ.

❖ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒԹՅՈՒ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ»
ՊՈԱԿ

N 7/129

18. 06. 2021

«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ
ԲԱԶՄԱԶՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ
ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ»

Հայաստանի ազգային գրադարանի տնօրինության և աշխատակազմի անունից մեր խորին շնորհակալությունն ու երախտագիտությունն ենք հայտնում «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի»՝ հանձին պարոն Գուրգեն Մելիքյանի, հիմնադրամի հովանավորությամբ հրատարակված «Ստեփան Ալաջաջյան: Չսպիացած վերք» (Երևան, 2019) եռահատորյակից ութ կոմպլեկտ (ութ կոմպլեկտ, քսանչորս միավոր) մայր գրադարանին նվիրաբերելու համար:

Բարձր գնահատելով Ձեր հայրենանվեր գործը՝ հպարտությամբ և ուրախությամբ արձանագրում ենք, որ ստացված գրականությունը ոչ միայն կգտնի իր արժանի տեղը ազգային գրադարանի հավաքածուներում, այլ նաև հասանելի կլինի ընթերցողական լայն շրջաններին:

Հարգանքով՝ (ստորագրություն, կնիք)
Տնօրեն՝ ԱՆՆԱ ՉՈՒԼՅԱՆ

❖ «ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ
ԲԱԶՄԱԶՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ»
ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ Ս/Թ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ
14-Ի 4-ՐԴ ՆԻՍՏԻ ՈՐՈՇՄԱՄԲ

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ա Գ Ի Ր ԵՎ Շ Ն Ո Ր Հ Ա Վ Ո Ր Ա Ն Ք

Մեր հիմնադրամը չէր իրագործի իր բարեգործական ծրագրերից և ոչ մեկը, չէր կարողանա օգնել ներդրության մեջ ակամա հայտնված մեր հայրենակիցներին, եթե չօժանդակեին նրա կողքին կանգնած գերագնիվ հայորդիները՝ մեր բարերարները: Մեկն էլ Դուք եք, Արթիկից մեր լավ բարեկամ:

Սիրելի՛ Կարապետ, Ձեր հարուստ կենսագրությունը չի սահմանափակվում միայն ելակի, մոշի և գյուղատնտեսական այլ բարիքների որակյալ արտադրության հրաշալի կազմակերպմամբ: Արցախյան ազատագրական շարժման իրական ու եռանդուն մասնակիցներից եք Դուք, առաջին պատերազմից հետո մեծ ջանքեր եք ներդրել աղետի հետևանքները վերացնելու գործում և հատկապես՝ Ծիծեռնավանքի նորոգման ու բացման հանդիսություններում: Մեր հիմնադրամի օգնության ծրագրերում բարեխղճորեն կատարել և այսօր էլ կատարում եք անգնահատելի ներդրումներ:

Այսօր Արցախը Հայաստանին կապող նեղ միջանցքի հայաբնակ հինգ գյուղերի՝ Հին Շենի, Մեծ Շենի, Լիսագորի, Եղցահողի և Արիավանի դպրոցների ուսուցիչները սիրով են վայելում Ձեր տրամադրած ելակի մուրաբան և օրինում արտադրողին ու նվիրաբերողին:

Սիրելի՛ Կարապետ, մեր հիմնադրամի հոգաբարձության խորհուրդը ջերմորեն շնորհավորում է Ձեր փառահեղ ծննդյան 60-ամյակը, խորին շնորհակալություն հայտնում ազգանվեր վերաբերմունքի համար և քաջառողջություն, հաջողություններ, անձնական երջանկություն մաղթում Ձեզ ու Ձեր հարազատներին հանուն մեր հայրենիքի հզորացման ու բարգավաճման: Մինևույն ժամանակ, խորհուրդը ի սրտե ձեզ է նվիրում բոլորիս հարազատ Արցախի հավերժությունը խորհրդանշող «Մենք ենք, մեր սարերը» հուշարձանի փորագիր պատկերով ժամացույց:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՈՒՆԻՑ՝ Գ.
ՄԵԼԻՔՅԱՆ

❖ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՌԵԿՏՈՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՊՐՆ Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ
ՉԵԿՈՒՑԱԳԻՐ

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմա-
զավակ ընտանիքների հիմնադրամի» վարչությունը
իր՝ 10.03.2021 թ. կայացած նիստում որոշում է
ընդունել իր գումարների հաշվին սահմանել ԵՊՀ
դոցենտ, մշակութային գործիչ Խորեն Պալյանի ան-
վան կրթաթոշակ, որը պետք է հատկացվի հայ
բանասիրության ֆակուլտետի երկրորդ կուրսի
գերազանց առաջադիմությամբ, հասարակական
ակտիվությամբ աչքի ընկնող, կազմակերպչական
ունակություններով օժտված, ազգային նկարագիր
ունեցող ուսանողուհի Ամայա Հունանի Հարու-
թյունյանին:

Խնդրում ենք ս/թ ապրիլի 1-ից սահմանել
«Խորեն Պալյան» կրթաթոշակ և այն տրամադրել
Ամայա Հունանի Հարությունյանին:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՄԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
(ստորագրություն) Ա. ԱՎԱԳՅԱՆՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝
(ստորագրություն) ԿՆԻՔ

❖ «ԹԵԶԵՅԱՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՄԻՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
դպրոցներին Ձեր հատկացրած դրամական
օգնությունը ստացանք երախտագիտությամբ:
Արցախը Հայաստանին կապող Բերձոր–Ստե-
փանակերտ ճամփեզրին գտնվող Արիավան
(Աղավնո), Հին Շեն, Մեծ Շեն, Լիսագոր, Եղցահող
գյուղերի դպրոցների ուսուցիչներն ու մյուս
աշխատակիցները հոկտեմբեր, նոյեմբեր,
դեկտեմբեր ամիսների համար արդեն առձեռն
ստացել են յուրաքանչյուրը 25 000-ական ՀՀ դրամ
պարգևավճար (ընդամենը՝ 2 մլն 250 հազար ՀՀ
դրամ): Կից ներկայացվում են ստացականները:

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ
ընտանիքների հիմնադրամի» հոգաբարձության
խորհուրդը խորին շնորհակալություն է հայտնում
Ձեզ այս կարևոր նվիրատվության համար:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՈՒՄԻՑ՝
Գ. ՄԵԼԻՔՅԱՆ
20. 10. 2021

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ ԳՐՔԵՐԸ

1. Արցախ Բունիթյան - Արյունոտ օրեր. Մարտակերտ, 1993, գիրք 3, 2000, 402 էջ:
2. Հայկ Դեմոյան, Ղարաբաղյան հակամարտությունը և թյուրքական գործոնը, 2002:
3. Սամվել Մուրադյան – Գրական հանգրվաններ, Գիրք Ա, Եր. 2003, 496 էջ:
4. Հրաչիկ Սիմոնյան, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 1-ին, 2003, 814 էջ:
5. Հենրիկ Էդոյան, Հին եգիպտական մեռյալների գիրքը, Եր. 2004, 260 էջ:
6. Արծրուն Ավագյան, Պատկերազարդ պատմություն Շահան Շահնուրի, Եր., 2004, 277 էջ:
7. Լևոն Եզեկյան, Հայոց լեզու, Եր. 2005, 398 էջ:
8. Արտաշես Պապոյան, Հայագիտական հետազոտություններ, Եր. 2007թ., 836 էջ:
9. Ներսես Մկրտչյան, Հայերենից փոխառյալ բառեր թուրքերենի բարբառներում, Եր., 2007, 318 էջ:
10. Լուսինե Սահակյան – Բարձր Հայքի Բաբերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը XVI դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում, Եր., 2007 թ., 307 էջ:
11. М.Мелкумян, Русский язык, Եր. 2010, 100 էջ:
12. Աբովյանագիտական 5 (հոդվածների ժողովածու), Եր. 2012, 120 էջ:
13. Գոհար Մարտիկյան, Ապրելու բանաձև, Եր. 2014, 343 էջ:
14. Վարուժան Խասսուր, Քառյակներ, 2014, 192 էջ:
15. Լենդրուզ Ալոյան, «Մշակ»- ի հրապարակախոսները 19-րդ դարավերջ, 20-րդ դարասկիզբ, Եր. 2014, 256 էջ:
16. Արթուր Իսրայելյան - Դիվանագիտական և քաղաքական տերմինների հայերեն- արաբերեն բառարան, Եր., 2014, 112 էջ:
17. Վարդան Պետրոսյան, Ընդհանուր և հայ լեզվաբանության հարցեր, Եր. 2015թ., 347 էջ:

18. Ն. Հովհաննիսյան – Հայոց ցեղասպանությունը հաստատված է միջազգային գիտական, իրավական և մարդու իրավունքների հանրությունների կողմից, Եր., 2015, 175 էջ:
19. Թադևոսյան, Չարչյան, Միջին պարսկերեն և պարթևերեն ուսումնամեթոդական ձեռնարկ , Եր. , 2015, 45 էջ:
20. Նիկոլայ Հովհաննիսյան - Մերձավոր Արևելքի և Սիրիայի հայ համայնքները և նրանց հեռանկարները , Եր., 2015, 52 էջ:
21. Արևելագիտության հարցեր (հոդվածների ժողովածու), հ. 10, Եր. 2015:
22. Սարգիս Մխիթարյան, Հույս և սպասում, Եր. 2015, 152 էջ:
23. Լուսինե Սահակյան, Համշենը հայկական ձեռագրերում. գունավոր ներդիր և մեկ քարտեզ, Եր., 2019, 363 էջ:
24. Հենրիկ Մ. Աբրահամյան- Հայաստանի անկախացման հասարակական – քաղաքական նախադրյալները և կայացման սկիզբը , Եր., 2020, 396 էջ:
25. Արման Նավասարդյան – Հերմեսից մինչև մեր օրերը, Գիրք Ա , Եր. 2020, 160 էջ:
26. Ալեքսան Յակոբեան – Արքայատոհմերն ու իշխանատոհմերը Բուն Աղուանքում և Հայոց Արևելից կողմանքում անտիկից մինչև ԺԳ դար , Եր. 2020, 440 էջ:
27. Karimi Majid, Caucasian Tats – Persian Speakers of the Eastern Transcaucasia, translated by Shadi Karimi, Yerevan State University, 2020, 440 p.
28. А. Ж. Арутюнян, АРМЕНИЯ, ГОСУДАРСТВА ВОСТОЧНОГО СРЕДИЗЕМНОМОРЬЯ И ИРАН (189 г. до н.э - 298 г. н.э) Ростов-на –Дону:Издательство Южного федерального университета, 2015.-370 с.
29. Karen Ohanj(Ohanjanyan)-Karabakh Again... a novel and a short story, Yerevan 2021.- 1
30. Փառանձեմ Մետիխանյան, Հայոց անվանարանը, Երևան, ԵՊՀ հրատ. 2021թ. 480 էջ:
31. Քրիստինե Կոստիկյան, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտակներ (1798-1829), Երևան, Մատենադարան, 2021թ, Պրակ հինգերորդ, 576 էջ
32. Սերգեյ Աղաջանյան, Մշակույթի տեսություն, ուսումնական ձեռնարկ բուհերի ուսանողների համար, Երևան, 2021թ

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի բարեկամներին,
«Բարեգործ» թերթի ընթերցողներին տեղեկացնում ենք, որ նվիրատվություններ կարելի է ուղարկել հետևյալ հաշվեհամարներով՝

«Արդշինբանկ», ՓԲԸ Գրիգոր Լուսավորիչ 13 փող, Երևան, ՀՀ

SWIFT Code: ASHBAM22

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»

Հաշվի համար (ՀՀ դրամ)՝ 2475704668770000

(USD) 2475704668770020

(EUR) 2475704668770010

**ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՍԱՄՎԵԼ ՍՈՒՐԱԳՅԱՆ - բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ՝**

ԱՎԱԳՅԱՆ Ա., բ.գ.դ. պրոֆեսոր

ՄԵԼԻՔՅԱՆ Գ, բ.գ.թ. պրոֆեսոր

ՍԱՖԱՐՅԱՆ ԱԼ., պ.գ.թ. պրոֆեսոր

Տպաքանակը՝99: Թերթը բաժանվում է անվճար:

Հասցեն՝ Երևան, 0025, Արվյան 52 Ա, հայ

բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 215 սեն.

Հեռ.060 710629,010-55-25-37, 52-29-36; 055-52-29-36:

Շարվածքը և ձևավորումը՝ Ս. Մուրադյանի: